



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՎԱՃԱՌԱԿԱՆԻ ՄԸ
ԸՆԹԱՑՔԸ

ԳՐԵՑ
ՓՐԱՏԱՓՐԱՆ
Կ. ՍՕՂԱԻԵԱՆ



Կ. ՊՈԼԻՍ
ՏՈՒՆԳՐԵՐԵՆ ԵՎ ՄԱՏՔՐԱԾԵՆ

1905

347.7
U-66

1 MAR 2010

349.7
U-66

Վ. Ա. ՃԱՌԱԿԱՆԻ ՄԸ

340
1813-00

ԸՆԹԱՑԳԸ



ԳՐԵՑ

ՓԱՍՏԱՐԱՆ

Կ. ՍՕԼԱԲԵԱՆ

1003
14572



Կ. ԳՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ՄԱՏԹԷՍՅԱՆ

1904

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

«Առանց գործիքի արհեստ»
և առանց զեկի նաւ՝ չբլլար»

ՏՊԱՐԱՆ, ԿԻՄԱԳՐԱՏՈՒՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ

Ե. Մ Ա Տ Թ Է Ո Ս Ե Ա Ն

Թիւ 27, Ֆինանսնախար եօգուշու, Կ. Պոլիս

Մարդս կոչուած է ընկերութեամբ ապրիլ, որուն պատճառաւ թե՛ ինչ միջավայրի մեջ ալ ու գտնուի, ապրիլ եւ ապրեցնել, վարել ու վարուիլ կարենալու համար տեղական օրէնքներն ու պայմանները գիտնալու անհրաժեշտ պէտք ունի :

Օրէնքները միայն մարդկութիւնը զիրար շղթայող օղբ չեն, այլ եւ մարդս երկնից հետ կապող յարաբերական թելն ալ են, ինչպէս նաեւ մարդուն կը ներշնչեն գերբնական գիտակցութիւն, ինքնաճանաչութիւն եւ կ'ապահովեն մարդուն կեանքը :

Եթէ երեւակայենք Աւստրալիայի մեջ վայրենի երկիր մը, ուր ո՛չ կառավարութիւն եւ ո՛չ օրէնք կայ, հոն պիտի տեսնենք որ մարդկութիւնը կատարելապէս անասնական վիճակ մը ունի : Իսկ ուր որ կառավարութիւն եւ օրէնք կայ, հո՛ն մարդիկ զարգացած, արհեստն ու գիտութիւնը յառաջդիմած, երկիրը շէն ու ծաղկած եւ վերջապէս կեանքը ապահովուած է : Ուրեմն կառավարութիւն եւ

معارف عمومیہ نظارت جلیہ سنک ۲۸ کانون ثانی ۱۳۱۸ تاریخلی
و ۴۵ نومرولی رخصتنامه سیله طبع اولمشدر

Դ

օրէնքն են որ մարդկութեան խմորը կը շինեն, կ'ազնուացնեն եւ զայն յառաջդիմութեան շաւիղին մէջ կը դնեն:

Թեպէտեւ մարդս ապրելու համար ամեն բանի ալ պէտք ունի, բայց պէտքերն իրարու հետ բաղդատելով, իրարմէ աւելի կամ նուազ կարելու կրնան ըլլալ. մարդուն համար մասանին անշուտ այնչափ անհրաժեշտ կարելուութիւն չունի, որչափ հացը եւ ջուրը ունին:

Այսպէս ալ քաղաքակրթեալ երկիրի մը մէջ ապրող մէկը՝ թեւ շատ գիտութիւններ գիտնայ, բայց Օրէնքի գիտութիւնը աւելի կարելու տեղ մը կը բռնէ իր պէտքերուն մէջ. վասն զի մարդ երբեմն գիտակցաբար եւ երբեմն անգիտակցաբար մէն մի շարժումի մը առթիւ, օրէնքի մը այնպիսի թելին կը հպի, եւ իւրաքանչիւր քայլափոխին այնպիսի օրէնքի մը կը հանդիպի, որ եթէ չգիտնայ շարժումին ձեւը եւ քայլուն եղանակը, մեծ վնասի մը կ'ենթարկի եւ չի կրնար իր նպատակին հասնիլ:

Անհաս մը երբ իր գործին մէջ չյառաջդիմեր, անոր պատճառը այնքան արատաւոր պարագայի մը վերագրելի չէ, որչափ որ այդ գործի մէջ իր ունեցած անտրամադութեան եւ անոր գաղտնիքներուն անհմուտ ըլլալուն վերագրելի է: Բնականաբար արհեստաւոր մը երբ հմտութիւն, եւ գործիք չունենայ չի կրնար գործել եւ յառաջդիմել,

Ե

այնպէս ալ վանառական մը երբ չգիտնայ իր գործին օրէնքն ու պայմանները չի կրնար գործել ու յառաջդիմել:

Ուրեմն իւրաքանչիւր անհաս պէտք է գիտնայ երկրին տիրող Օրէնքները:

Շնորհիւ Մեր Բարեխնամ Վեհափառ, Ինքնակալ ՂԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԽԱՆ ԿԱՅՍԵՐ ուսումնասիրութեան եւ յառաջդիմասիրութեան, թեպէտեւ Օրէնքները ժողովրդեան մասշեղի ընելու համար պէտք եղած հոգածութիւնները չէ խնայուած:

Սակայն մեր մէջ՝ առեւտրական անհասի մը պէտքին ծառայող սոյն կերպ շարայարեալ օրինական հրահանգներ շատ պակաս գտնուելուն պատճառաւ, պէտք զգացի սոյն ՎԱՃԱՌԱԿԱՆԻ ՄԸ ԸՆԹԱՑՔ անուամբ գրոյկս խմբագրելով Յարգով ընթերցողաց մատուցանել նոցա ամենօրեայ գործոց ուղեցոյց ծառայելու, զոր կը յուսամ թէ յարգով ժողովրդեան խիստ օգտակար կրնայ ըլլալ:

Կ. Գ. ՍՕԼԱԿԵՍԱՆ



ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՕՐԷՆՔՆԵՐ



Ա. Գ Լ Ո Ի Խ

Օսմանեան Կառավարութեան դասարանները եւ
անոնց պատկանող օրէնքները չորս բաժանում ունին:

Ա. — ՄԱՀՔԷՄԷԻ ՇԵՐԻՍԷ (Կրօնական Դասարան), որ Կրօնական եւ Ամուսնական (Մէզնէպ վէ Նիքեան վէ Դալազ), Ժառանգական (Թէրէքէ վէ Միրաս), Խնամակալութեան (Վիլայէթ վէ Վասայէթ), Կտակի (Վասիէթ) գործերէն ի զատ Վագֆ կալուածներու վերաբերեալ դատերը կը նայի:

Բ. — ՄԱՀՔԷՄԷԻ ՀՈՒԳՈՒԳ (Իրաւանց կամ Քաղաքական Դասարան), որ ոչ-վաճառական եւ զող պարզ անձերու եւ արհեստաւորներու մէջ եւ զաժ՝ առեւտրական պարզ դատերը, զուտ կալուածի վերաբերեալ խնդիրները եւ կալուածէն վարձուորը հանելու, հողային եւ այլ վէճերը կը նայի:

Գ. — ՄԱՀՔԷՄԷԻ ԹԻՃԱՐԷԹ (Առեւտրական

Դասարան), որ վաճառականներու մէջ ծագած դատերն ու գործերը կը նայի :

Դ. — ՄԱՀՔԷՄԷԻ ՃԷՁԱ. (Պատժական Դասարան), որ զուտ պատժական գործերը կը նայի :

Ատոնցմէ, Շէրիէ և Քաղաքական Դատարաններու վրայ խօսիլը մեր նպատակադրած նիւթէն դուրս ըլլալով, առ այժմ զանց կ'առնենք, այլ վաճառական մը իր գործերը անսայթաք վարելու համար, իր ընթացքին մէջ ի՛նչ կերպ օրէնքներ գիտնալու որ պէտք ունի, անոր մասին պիտի ջանանք հարկ եղած տեղեկութիւնը տալ մեր յարգոյ ընթերցողաց :

Վաճառական կը համարուին անոնք՝ որոնք առեւտրական գործ մը հաստատելով առուծախով կը զբաղին :

Վաճառական կը համարուին նաև, սեղանաւորութեամբ կամ փոխանակագրի (փոխիչա) գործով զբաղողները : Ինչպէս նաև ապրանք մը ուրիշին վարձու տուողները . գոյք, ապրանք և պարէնի վրայ գործառնութիւն ընողները, Գործարանապետութեամբ, յանձնակատարութեամբ (գումիսիօնըրդ) զբաղողներն . ցամաքի կամ թէ ծովու ճամբով ապրանք փոխադրողները, տեղ մը ուտեստ կամ ապրանք տալու համար յանձնառութիւն (թահիտ) ստանձնողները, վաճառականութեան մէջ ասոր անոր գործակալութիւն ընողները, աճուրդի համար յատուկ տեղ մը հաստատողները . ցուցադրութիւն (նիւնայիչըրդ), վաճառականութեան մէջ միջնորդութիւն (սրնաարըրդ)

ընողները, ծովային գործոց վրայ գործառնութիւն ընողներ և դրամատուն (պանիա) ունեցողները :

Վերոյիշեալներու գործառնութենէն ծագած վէճերն ու դատերը բացարձակապէս Առեւտրական Դատարանին մէջ կը նայուին :

Բ. Գ Լ Ո Ի Խ

Վաճառական մը Ձ1 տարիքը լրացուցած պէտք է որ ըլլայ, անկէ պակաս տարիք ունեցողները իրենց խնամակալի (շախի), հօր (վեյի) երաշխաւորութեան ներքեւ և թիճարէթ դատարանի արտօնութեամբ կրնան վաճառականութիւն ընել : Իսկ առանց այս արտօնութեան եղած գործառնութիւնները բոլորովին անվաւեր են : Խանութ բացող և առեւտուրով զբաղող կանայք ալ, վաճառական կը համարուին և այս օրէնքներուն ենթակայ են :

Վաճառական մը՝ անպատճառ պարտաւոր է երեք անհրաժեշտ տոմարներ ունենալ, որոնք դեռ չգրուած՝ պէտք է Առեւտրական Դատարանի պատօնէին ներկայացնէ . երեսներու թիւերը անոնց դնել տալով, իւրաքանչիւր երեսը անոնց դրոշմել տայ :

Ա. — Օրական տոմար , որուն մէջ պէտք է արձանագրէ օրական պարտքն ու պահանջը , օրական գործառնութիւնները , իրեն եկած և իր քաշած՝ գնած և ուրիշի մը փոխանձած փոխգիրները , օրական առեւտուր և մէկ ամսուան ընթացքին մէջ տան համար տեղի ունեցած ուտեստի և ծախսի ընդհանուր գումարը :

Բ. — Ընդօրինակութեան (ֆորիե) տոմար , որուն մէջ պէտք է հանէ ընկերներու և ուրիշ վաճառականներու հետ ունեցած յարաբերութեանց նամակները և միւս բոլոր թուղթերու օրինակները :

Գ. — Հաշուեկէիւ կամ Մայր տոմար , որուն մէջ պէտք է մի առ մի արձանագրէ մէկ տարուան ընթացքի մէջ գոյացած շահը կամ վնասը և պարտքը , իրենց տէրերու անուններով , պատրաստ դրամը , ապրանքը , գոյքը և կալուածները :

Վերոյիշեալ տոմարներու պատրաստութեան մէջ խիստ զգուշութիւն պէտք է ընել որ , գիրերը աւրուած՝ տողերը շատ բաց չըլլան , տողերու մէջ ջնջուած և վերը գրուած ու քերթուածներ չը գտնուին : Ամէն տարւոյ վերջ այս տոմարները պէտք է Առեւտրական դատարանի պաշտօնէութեան ներկայացնել , անիկա ալ քննելէն յետոյ վաւերագիր (սան) կը քաշէ : Այս եղանակով պատրաստուած տոմարները՝ դատաւարութեան մէջ իրեւ ապացոյց կրնան համարուիլ (թէ և անկանոն տոմարներն ալ անկարեւոր չեն նկատուիր , բայց ի նպաստ ներկայացնողին ապացոյց չեն կրնար նկատուիլ) :

Վաճառական մը այս պաշտօնական տոմար-

ներէն զատ պէտքին համեմատ , այլ և այլ տու-մարներ ալ կրնայ ունենալ առանց վաւերացնել տալու :

Գ. Գ Լ Ո Ի Խ

Ը Ն Կ Ե Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Վաճառականական ընկերութիւն երեք տեսակէ կը բաղկանայ :

Ա. — Քոլլեքիթ (Հաւաքական) ,

Բ. — Գումանքիթե (Շահակցական) ,

Գ. — Աննիմ (Անանուն) ,

Ա. — Քոլլեքիթ (Հաւաքական) կ'ըսուի , այն ընկերութեան որ մէկէ աւելի ընկերներ միանալով , թէ՛ հաւասար թէ՛ անհաւասար դրամագլուխներ գնելով մէջերէն մէկի և կամ երկուքի անուան մակդիրին (խնվան) տակ գործ մը կը հաստատեն , ինչպէս , չորս հոգիէ բաղկացեալ ընկերութիւն մը իրենցմէ մէկի կամ երկուքի անունը իրենց մակդիր ընելով գործ կրնան ընել : Այս կերպ ընկերութիւն մը կամ անպատճառ մակդիր մը ունենալու է կամ

Թէ իւրաքանչիւր գործի մէջ՝ անդամներն ամբողջն ալ ստորագրելու են : Ընկերութիւն՝ իրենց ներքին պայմանները , թէ ինչ կերպ որ ալ ըլլան , պարտաւոր է լրագիրներու և կամ ազդերու միջոցով ուրիշներուն ծանուցանել ; որովհետեւ ուրիշները պէտք է գիտնան անոնց կացութիւնը , որ անոր համեմատ գործեն անոնց հետ , հակառակ պարագային երկու կողմի համար մեծ վէճի նիւթ մը կը դառնայ :

Ընկերութեան մակդիրը (իւնվան), անդամներէն որոնց անուան որ յատկացած է , անիկա ընկերութեան վերին վարիչ մարմին (միւսիւր) կը համարուի , որուն տուած ստորագրութեան պատասխանատուութիւնը և ըրած բոլոր գործառնունութիւններէ բղխած շահ և վնասը անխտրապէս միւս անդամներուն ալ կը պատկանի :

Այս կերպ ընկերութեան մէջ՝ բոլոր անդամները ամէն կերպ գործողութեան և վնասի մէջ , իրարու փոխադարձաբար երաշխաւորներ են , այսինքն ընկերութիւնը սնանկացած պարագային՝ ամբողջ անդամներ պահանջատէրերու հանդէպ իրարու երաշխաւորներ կը համարուին :

Բ. — Գումանցիքեր (Շահակցակաւն) կ'ըսուի այն ընկերութեան որ , ուրիշ անձերու մէջ արդէն կանխաւ կազմուած ընկերութեան մը հետ՝ զուրսէն ուրիշ ընկերութիւն մը կամ բաժանորդներ ալ միանալով , և կամ թէ քանի մը անձինք անհաւասար դրամագլուխներ դնելով (երբեմն ոմանք միւնակ աշխատութիւն տալով) իրենց մէջ ընկերութիւն մը կը կազմեն , գործարանական , հանքային

և կամ մենաշնորհեալ գործ մը կը հաստատեն և կամ թէ վաճառականութիւն կ'ընեն :

Այս ձեւ ընկերութեան մը մակդիրը իրենց անդամներէն ո և է մէկի անուան չի կրնար յատկանալ , այլ միայն նպատակադրեալ գործի անուան կը յատկանայ : Անդամները իրենց մէջէն տնօրէն մը ընտրելով , անոր կը յանձնեն գործին բովանդակ վարչութիւնը , որու գործած շահը և վնասը և ո և է կերպ պատասխանատուութիւնը ամբողջ ընկերութեան կը պատկանի : Այլ միայն թէ իւրաքանչիւր անդամ տեղի ունեցած շահէն ու վնասէն իր դրած դրամագլխի համեմատութեամբ տուժելու և կամ շահ ստանալու պարտաւոր է :

Գ. — Անոնիս (Անանուն) ընկերութիւնը , Գումանտիթէր ընկերութեան գրեթէ մեծ և ընդլայնեալ տեսակն է . որոնք հանրային օգտի նպատակաւ կը կազմուին : Ասոնք դրամագլուխը ընդհանրապէս հրապարակ հանուած բաժնեթուղթերէ կը բաղկանայ . այս կերպ ընկերութիւն մը յատուկ մակդիր մը չունենալով յատկացուած գործի անունով կ'անուանուի : Ընկերութեան տնօրէնը անդամներ կ'ընտրեն , որուն գործառնութենէն ծագած շահը և վնասը բովանդակ ընկերութեան կը պատկանի . որով իւրաքանչիւր բաժնետէր իր բաժնի համեմատութեամբ վնասին կամ շահուն մասնակից կ'ըլլայ :

Այս կերպ ընկերութիւն մը կայսերական կառավարութեան արտօնութեամբ միայն կարելի է հաստատել :

Վերոյիշեալ երեք կերպ ընկերութիւններէ զատ մէկ մըն ալ Շիրֆէթի Ա.Տ.Ի.Ե (Պարզ ընկերութիւն) կայ որ, դրամագլուխով և կամ առանց դրամագլուխի քանի մը անձինք միանալով առանց մակդիր ունենալու, պարզ առեւտուրի գործ մը կը հաստատեն կամ առժամանակեայ գործ մը կ'ընեն կամ ստանձնում (իլլիզաւ, քահուտ) կը ստանձնեն, կամ արհեստ մը կ'ընեն:

Այս ձեւ ընկերութեան մէջ ծագած վէճերը թէպէտեւ Առեւտրական դատարանի (Թիմարէթի) մէջ կը նայուին, բայց և այնպէս Հուզուզի դատարանի մէջ ալ կրնան նայուիլ:

Իսկ միւս երեք կերպ ընկերութիւնները օրինական և վաւերական ըլլալու համար, պէտք է որ ընկերութեան պայմանագրութիւնը նախ օրինաց տրամագրութեան համաձայն խմբագրուի, երկրորդ տեղւոյն Առեւտրական դատարանին և կամ թէ (Մուզալիքաթ մուհարիրիս) (Հնդհանուր նօտար) վաւերացնել տրուի: Վաւերանալէն յետոյ ընկերութեան նպատակը, մակդիրը, դրամագլուխի քանակը, բաժիններու որակը և անունը, պայմաններուն համառօտութիւնը և ընկերութեան գործատեղին (իֆամքիլեան) հրատարակել տրուի լրագիրներու և ազգերու միջոցաւ:

Ընկերութեան ժամանակը լրացած միջոցին կրնայ կրկին վերանորոգուիլ, սակայն նախկին պայմաններու վրայ աւելցած ու պակսած կէտերը զարձեալ հրատարակել պէտք է:

Դ. Գ Լ Ո Ի Խ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԻՆ ՎԷՃԵՐՆ ՈՒ ԴԱՏԵՐԸ

Ընկերներու մէջ ծագած ներքին վէճերու առթիւ, դատարանին դիմում եղած պարագային, երկու կողմ կը պարտաւորին 2—4 անձէ բաղկացեալ հաշուեյարդար յանձնաժողով մը կազմելով ինքրի լուծումը և տնօրէնութիւնը անոնց յանձնել: Եթէ ասոր մասին իրենք զժկամակին և կամ թէ ընտրութեան մէջ չհամաձայնին, այն ատեն դատարանը ինք կ'որոշէ:

Յանձնաժողովոյ անդամներէն մէկը բողոքող (միսսայի) կողմ կ'ընտրէ և միւսն ալ բողոքեալ կողմ (միսսայիս ալէյն) կ'ընտրէ, յետոյ երկու կողմ միանալով՝ երրորդ մը կ'ընտրեն. իսկ եթէ երրորդի մը ընտրութեան մասին իրենք չհամաձայնին, այն ատեն դատարանը ինք կ'որոշէ: Եթէ ընտրողները իրենց ընտրած յանձնաժողովին, ի հարկին երրորդ մը ընտրելու իրաւասութիւն տուած են. այն պարագային յանձնաժողով եթէ որոշում տալու մէջ կարծեաց հաւասարութիւն գտնէ, ինք երրորդ մը ընտրելու պարտաւոր կ'ըլ-

լայ. իսկ եթէ կարծեաց անհաւասարութիւն տեղի ունենայ, այլ եւս երրորդի մը ընտրութեան հարկ չի մնար :

Այս երրորդի պաշտօնը թէ՛ գործի ընթացքին վրայ հսկելն է, և թէ՛ երկու անդամներուն մէջ կարծեաց հաւասարութիւն տեղի ունեցած պարագային, ինք որ և է կողմին հակին է, զոր այն պարագային՝ երրորդը որ կողմին որ հակելու ըլլայ՝ այն կողմ մեծամասնութիւն շահած կ'ըլլայ: Յանձնաժողովի անդամներուն թիւը երկուքէն աւելի կրնայ ըլլալ :

Յանձնաժողովին յանձնուած գործի լուծման համար, հակառակորդ երկու կողմեր համահաճութեամբ անպատճառ ժամանակ մը սահմանելու պարտաւոր են . այսինքն թէ սկսած օրէն մինչև որչափ ատեն խնդիրը լուծել ու վերջացնելու են, զոր մինչև այն օր՝ երկուստեք իրենց ունեցած թուղթերը, տուճարները և ուրիշ գրութիւնները տանել և յանձնաժողովին յանձնելու պարտաւոր են : Հակառակ պարագային, յանձնաժողով իրաւունք կ'ունենայ հակառակող կողմին մինչև տասը օր՝ բերել յանձնելու համար ծանուցագիր մը ղրկել . եթէ ասոր ալ դժկամակի, այն ատեն յանձնաժողով իր ունեցած թուղթերու վրայ յենլով որոշում մը տալու իրաւունք ունի :

Եթէ յանձնաժողովի ընտրութեան միջոցին երկուստեք (միստայի և միստայիս աշխի) պայման դրած են որ հաշուեյարդարներուն տուած ո և է կերպ որոշումը թէ՛ ըլլայ նպատաւոր թէ՛ աննպատ, իրենք առանց առարկութեան և կամ վերաքննութիւն (Իսթինաֆ), Վճռարեկութիւն

(Թիւիզ) ընելու պարտաւոր են ընդունիլ . դատարանն ալ ըստ իրենց պայմանին, սոյն յանձնաժողովի ըրած տնօրինութիւնը և տուած վճիռը կը վաւերացնէ . իսկ եթէ երկուստեք կանխաւ այսպէս պայման մ'ըրած չեն, հակառակող կողմը՝ կրնայ դատարանին բողոքել, դատարանն ալ՝ խնդիրը նկատողութեան առնելէն յետոյ, եթէ օրինաւոր գտնէ կը վաւերացնէ, իսկ թէ ո'չ կը ջնջէ :

Յանձնաժողովին այս պաշտօնավարութեան մէջ, եթէ անդամներէն մէկը մեռնի, ընկերութիւնը կը լուծուի, յանձնաժողովը կը բեկանի, և գործն ալ դարձեալ դատարանին կը վերադառնայ :

14579



Ե. Գ. Լ. Ո. Ի.

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

(ԳՕՄԻՍԻՕՆՃԸԼԸՔ)

Վաճառականութեան մէջ յանձնակիսար կ'ըսուի անոր, որ ուրիշ երկրէ ապրանք առնել զըրկելու համար իրեն յանձնարարութիւն մը կ'ըլլայ . և ինքն ալ, այն յանձնարարութեան համեմատ, ուրիշ վաճառականէ մը ապրանք գնելով անոր

հաշւոյն կը զրկէ : Այս յանձնակատարը (գումիսիօննի) յանձնարարութիւն ընողին փոխանորդը կը համարուի :

Յանձնակատարութիւն ընող վաճառականը եթէ սնանկանայ, յանձնակատարը (գումիսիօննի) իր զրկած ապրանքներուն վրայ, միւս պահանջատէրերէն նախադաս կը համարուի. այսինքն եթէ իրեն զրկած ապրանքը ուէ տեղ մը պատրաստ է, այն ապրանքը ետ առնելու խնդրոյն մէջ, միւս պահանջատէրերէն նախադաս կը նկատուի : Ատոնք ալ վաճառականի մը պէս օրինական տուեմարներ ունենալու պարտաւոր են :

Յանձնակատարութիւնը երկու կերպ է . Ա. ինչպէս որ վերը յիշեցինք, ուրիշի մը հաշւոյն ապրանք գնող զրկող : Բ. զայն փոխադրող կամ փոխադրել տալու համար ուրիշի յանձնող, որուն աւանդառու, փոխադրող (եմսնեքնի) կ'ըսուի :

Ինչպէս ըսինք, փոխադրողը (եմսնեքնի), փոխադրութեան համար իրեն յանձնուած ապրանքը ուրիշի միջոցաւ կրնայ փոխադրել տալ, բայց այս առթիւ տեղի ունեցած պատասխանատուութիւնը իրեն կը պատկանի :

Փոխադրողը՝ պարտաւոր է պայմանեալ ժամանակի մէջ, ապրանքը անպատճառ յանձնարարուած տեղը հասցնել . ճամբուն մէջ եթէ վնաս մը պատահի, սոյն վնասին փոխարէն՝ եթէ իրենց մէջ կանխաւ տուեցելու պայման ըրած են, նոյն պայմանին համեմատ փոխադրողը տուեցելու պարտաւոր է . իսկ եթէ պատահած վնասը բնական պատճառէ մը և կամ բնական յապաղումէ մը և վերջապէս եթէ իր կամքէն անկախ պատճառէ մը բղխած է,

այն պարագային վնասը տուեցելու պայմանը կանխաւ իրենց մէջ պայմանուած ըլլայ թէ ո'չ, փոխադրողը տուեցելու պարտաւոր չէ :

Ապրանք հասած միջոցին, ստացող վաճառականը, երբ ապրանքներուն մէջ վնաս մը նշմարէ, պէտք է որ ապրանքը դեռ չլիցցուցած, և փոխադրութեան վարձք դեռ չլծարած՝ անմիջապէս տեղւոյն Առեւտրական դատարանին զիմէ և բողոքէ . թէ և ինչ ինչ պատճառներով այս դատը մինչ մէկ տարի ալ կրնայ յետաձգուիլ, սակայն աւելի ապահով միջոցը անմիջական բողոքելն է :

Ապրանքը փոխադրողին յանձնուած միջոցին՝ փոխադրագիր մը, որ է բեռնագիր (նագլիե գայմեսի) պէտք է չլինել, որուն մէջ պէտք է նշանակել ապրանքներուն տեսակները, որակը և քանակը, փոխադրելիք տեղը, հասնելիք պայմանաժամը, յանձնողի, փոխադրողի և յանձնուելիք վաճառականին անունը, փոխադրութեան վարձքը, ճամբուն տեղի ունենալիք վնասի պայմանը և յանձնուելիք վաճառականի և ընկերութեան յատկանիշը (նարգա) և այլն : Այս փոխադրագիրը պէտք է երկու օրինակ գրել և երկուստեք ստորագրելով իրարու փոխանակել :

Զ. Գ Լ Ո Ի Խ

Փ Ո Խ Գ Ի Բ (ՓՈՒԻԶԱ.)

Փոխգիրը՝ վաճառականութեան մէջ տեղէ մը , ուրիշ տեղւոյ մը վրայ քաշուած պարտքին կ'ըսուի. զոր օրինակ Պոլիս գտնուած ընկերութիւն մը, դարձեալ Պոլիս ուրիշ վաճառականէ մը ապրանք կամ ստակ առնելով՝ անոր արժէքը էրզրում գտնուած իր ընկերոջ կողմէն, էրզրումի մէջ գտնուող միւս մարդուն ընկերոջ վճարուելու համար ի Կ. Պոլիս փոխգիր (փոխիշա) մը կու տայ այն մարդուն , որ այն ալ առնելով զայն՝ էրզրում գտնուող իր ընկերոջ կը ղրկէ , փոխգիր քաշող ընկերութեան մարդէն գանձելու համար և կամ փոխադարձաբար :

Փոխգիրը՝ օրինական ըլլալու համար պէտք է որ գումարին քանակութիւնը , տեսնալէն որչափ ժամանակ վերջ վճարելի ըլլալը , ապրանք տուողի և փոխարժէքը վճարելու պարտաւոր եղող անձերու անունները , փոխարէն ինչ բան առնուած ըլլալը , ո՛ւր տեղէն ո՛ւր քաշուած ըլլալը, հրամանի ըլլալը կամ ո՛չ , և քանի՛ օրինակէ բաղկացած ըլլալը գրուի : Զոր օրինակ ,

« 150 (հարիւր յիսուն) Օսմանեան Լիրա »

« Մեծապատիւ . . . էֆ. էրզրում »

« Փոխանակագիրս տեսնելէդ 31 (երեսուն և

մէկ) օր վերջ՝ հաճեցէք վերոյիշեալ հարիւր յիսուն հատ Օսմանեան Լիրան (150 Օսմ. Լիրա) վճարել ի հրամանի Տեարք . . . եանի , որոյ փոխարէն տեղս ապրանք առնուած է , արժէքը անցուցէ՛ք մեր հաշւոյն : Երկրորդ , երրորդ օրինակներ չկան :»

(Ստեպագրութիւն)

15 Հոկտեմբեր 1905

Ի Կ. Պոլիս . . . Խան . . . Թիւ

Փոխգիրը քանի մը օրինակէ բաղկացած ընելու նպատակը այն է որ , եթէ մէկը կորսուի՝ միւս օրինակովն պահանջելու դիւրութիւն ըլլայ . բայց որ օրինակը որ ընդունուած ստորագրուած է՝ այն օրինակը վաւերական է . երբ մէկին արժէքը վճարուի միւսներուն ալ վճարուած կ'ըլլայ :

Այս պայմաններէն զուրկ եղած փոխգիր մը պարզ մուրհակի մը համարումը կը ստանայ : Եթէ փոխգիրը հրամանի է , ուրիշի մը կոնայ փոխանձուել (ճիտօ օրումնապիլիր) : (Այս մասին վերջէն պիտի խօսինք) :

Փոխգիր բուն քաշուած անձին ներկայացուցուած միջոցին , քաշուողը (մուխասապ) 24 (քսանը չորս) ժամուան մէջ , ընդունիլը կամ ո՛չ պատասխանելու է . եթէ ընդունի , փոխգիրի վրայ «ընդունեցի , կը վճարեմ» պարբերութիւնը և թուականը գրելով ստորագրելու է : Իսկ եթէ չընդունի , այն ատեն ներկայացնողը (հաւիչ) անմիջապէս տեղւոյն Առեւ-

տրական դատարանին դիմելով՝ չընդունող անձի
և կամ թէ իրեն փոխանձողի (ճրանքայ) վրայ
վնասի պահանջում (փողեղ) ընելու պարտաւոր է:

Փոխգիր մը եթէ քանի մը ձեռքերէ իրարու
փոխանձուած է (ճիտօ օրունտո խե), փոխանձուող՝
փոխանձողին վրայ, այսպէսով մինչև բուն փոխգիր
քաշողը, դէպի ետ ետ երթալով իրարու վրայ
փրօզէսդ ընելու պարտաւոր են:

Եթէ փոխանձողին (ճրանքայ) վրայ օրին փրօ-
դէսդըլլայ, փոխանձողը այլ եւս փոխգիրի արժէքը
տուժելու պատասխանատուութենէն կ'ազատուի,
զոր այն պարագային՝ գործը կը մնայ բուն փոխ-
գիր քաշողին (ֆեշիսեհն), քաշուողին (մոխադայ)
և կրողին (հաւից) մէջտեղ:

Փոխգիրի վճարածամը եթէ տեսնելէ անմի-
ջապէս յետոյ է, քաշուող անձը, արժէքը իսկոյն
վճարելու պարտաւոր է:

Իսկ եթէ տեսնելէ ժամանակ մը յետոյ է, վճա-
րածամը ընդունած օրէն կը սկսի բանիլ:

Բաշուած փոխգիրին փոխարէն թէ՛ դրամով
ըլլայ թէ՛ ապրանքով, պէտք է որ քաշողը՝ վճա-
րելիք անձին հասցուցած ըլլայ. այսինքն քաշած
փոխգիրի փոխարէն՝ անոր հաշւոյն բան մը գնած
ըլլայ. խնդիր չէ թէ անպատճառ ձեռքը պէտք է
հասցուցած ըլլայ, այլ բաւական է որ անոր յանձ-
նարարութեան վրայ անոր հաշւոյն ապրանք մը
գնած կամ ստակ տուած ըլլայ:

Փոխգիր քաշողը՝ քաշուելիք անձէն եթէ
կանխաւ փոխգիր քաշելու արտօնեալ չէ և կամ
թէ քաշուող անձի հաշւոյն ո եւ է գնում և կամ
վճարում մը ըրած չէ, այն պարագային քաշ-

ուող անձը՝ փոխգիրը չընդունելուն առթիւ պա-
տասխանատու չ'ըլլար: Փոխգիրին փոխարէն բան մը
փոխարինուած ըլլալը և կամ թէ քաշուողէն (ֆե-
շիսեհիսեհն) կանխաւ յանձնարարուած ըլլալը հաս-
տատուելու պարտքը, քաշող անձին կը պատկանի:
Փոխգիրը եթէ դրոշմաթուղթ (փող) չունենայ
ճիրօները պատասխանատու չեն:

Վնասի պահանջումի (փողեղ) նպատակը՝
երկուք է, Ա. գումարին տոկոսը պահանջել և Բ.
եթէ փոխգիրին փոխանձողներ (ճիտանքա) կան,
ղանձք տուժելու պատասխանատուութենէ չփախ-
ցնելն է. ապա թէ ո'չ «վճարումի յետաձգուելուն
առթիւ այլ և այլ վնասի ենթակայ եղած եմ»
առարկելով վնասի պահանջումներ ընելը ներքի չէ:

Փրօզէսդ եղած միջոցին՝ դուրսէն մէկը, որ
գործին հետ երբեք վերաբերութիւն չունի, կրնայ
միջնորդել և փոխգիրի արժէքը վճարել. զոր այն
պարագային արժէքը պահանջելու իրաւատուութիւնը
իրեն կը փոխանձի:

Փոխգիր ընդունողին՝ պայմանեալ վճարա-
ժամէն աւելի ժամանակ չի կրնար տրուիլ, հակա-
ռակ պարագային փոխանձողները (ճրանքայ) պա-
տասխանատուութենէ կ'ազատուին:

Է. Գ Լ Ո Ի Խ

Փ Ո Խ Ա Ն Զ Ո Ի Մ (Ճ Ի Բ Օ)

Վաճառականութեան մէջ փոխգիրները եթէ հրամանի են, ինչպէս նաև հրամանի մուրհակները, իբրև ստակ իրարու կրնան փոխանձուիլ, հրամանի եղած փոխանձումները (ճիւղ) վճարաժամէն առաջ պէտք է որ ըլլան. հակառակ պարագային, այսինքն պայմանաժամէն առաջ թուական դնելը թէ՛ փոխանձման զօրութիւնը կը ջնջէ և թէ՛ միանգամայն նենգեալ համարուելով, երկու կողմին համար ալ պատժոյ միջոց կը դառնայ :

Փոխանձումը օրինական ըլլալու համար՝ պէտք է որ, փոխանձուած թուղթին ետև փոխանձման թուականը, որու փոխանձուած ըլլալը, հրամանի ըլլալը կամ ո՛չ և արժէքը առնուած ըլլալը կամ ո՛չ՝ բացորոշապէս գրուի : Ինչպէս ,

«Փոխգիրիս (կամ մուրհակիս) արժէքը հաճեցէ՛ք վճարել ի հրամանի Տեարք . . . եանի, որոյ փոխարէնը կանխիկ (կամ ապրանքով) ստացած եմ : »

15 Յունուար 1904
Ի Կ. Պոլիս

(Ստորագրութիւն)

Վերոյիշեալ պայմաններէն զուրկ եղած փոխանձումը վաւերական չէ. զոր այն պարագային մուրհակ կրողը (հաւնի) ո՛չ թէ ուղղակի պահանջատէր մը եղած կ'ըլլայ, այլ իրեն փոխանձողին փոխանորդը կը դառնայ : Կրողը (հաւնի) թէպէտև այն թերի փոխանձումով կրնայ պարտապանին դէմ դատ վարել ու արժէքը պահանջել. սակայն պարտապանը անոր դէմ կրնայ շատ մը առարկութիւններ առաջ բերել, դատարանն ալ անոր առարկութիւնները կ'ունկնդրէ, եթէ օրինական գտնէ՝ յայնժամ մուրհակի զօրութիւնը կը ջնջէ, իսկ եթէ ապօրէն գտնէ, մուրհակի զօրութիւնը կը հաստատէ :

Փոխգիր և հրամանի մուրհակները իրարու փոխանձողները մինչև վճարաժամի օրը իրարու փոխադարձ երաշխաւորներ են :

Ինչպէս փոխգիրի բաժնին մէջ խօսեցանք, մուրհակը վերջին անգամ որու ձեռք որ մնայ, անիկա պարտաւոր է վճարաժամին օրը զայն պարտապանին ներկայացնել. եթէ անիկա դժկամակի փոխարէն վճարել, կրողը (հաւնի) իսկոյն պարտաւոր է փրօզէսդ ընել : (Պահանջատէր — սային կամ հաւնի) — այս պարագային ազատ է, ուզէ մինակ պարտապանին վրայ դիմում կ'ընէ, ուզէ մինակ իրեն փոխանձողին (ճրանքայ) վրայ դիմում կ'ընէ, և եթէ ուզէ երկուքին վրայ ալ հաւասարապէս դիմում կրնայ ընել :

Կրող (հաւնի) վճարաժամին մուրհակի արժէքը չվճարուած ատեն, եթէ փոխանձողներու (ճրանքայ) վրայ չդիմէ (փրօդեալ չընէ) զանոնք պատասխանատուութենէ ազատած կ'ըլլայ, այսինքն անոնցմէ այլեւս չի կրնար պահանջել. իսկ պարտապանին վրայ

մինչև հինգ տարի , ուղած ատեն՝ բողոքելու և պահանջելու բացարձակ իրաւունք ունի :

Փոխանձողները՝ առանց փրօղէսդի կրնան պատասխանատու բռնուիլ , պայմանաւ որ , նախապէս պահանջատիրոջ գրաւորապէս ապահովցնեն թէ , որչափ որ այն գումարը վճարուած չէ , իրենք դարձեալ պատասխանատու կը մնան :

Ինչպէս փոխգիրի մասին մէջ ըսինք , նոյնպէս հրամանի մուրճակի մասին մէջ , դուրսէն մէկը գործին կրնայ միջնորդել և արժէքը վճարել , զոր այն պարագային պահանջատիրոջ ամբողջ իրաւասութիւնը իրեն կ'անցնի :

Փոխգիրը եթէ կորսուի , կորսնցնող՝ երբ անոր երկրորդ , երրորդ օրինակներ չունենայ , անմիջապէս պարտաւոր է դատարանին դիմել և խնդիրը յայտնել : Դատարանը երկու կողմ դատի կը կոչէ և անոնց յարաբերութեան թուղթերը նկատողութեան կ'առնէ , ու անոր համեմատ վճարման պէտք ըլլալը կամ ո՛չ կը վճռէ :

Եւրոպայէն՝ Օսմանեան երկրի մէջ բնակող վաճառականի մը վրայ և փոխադարձաբար քաջուած փոխգիրները պահանջատէր որ է (համիդ) մինչ վեց ամիս . Ամերիկայէն՝ մինչև մէկ տարի և այսպէս տեղի հեռաւորութեան համեմատ , պարտապանին ներկայացնելու և հակառակ պարագային դատ վարելու պարտաւոր է : Եթէ ոչ , այլեւս իրաւունքէ կը զրկուի :

Փոխգիրի արժէքը՝ որպէս զի պարտապանը ներկայացնողին չվճարէ , ուրիշ պարտապան մը միւս պարտապանին վրայ փրօղէսդ կրնայ ընել :

Փրօղէսդ եղած թուականէն սկսեալ , պահանջատէրը (համիդ) և պարտապանը (մեհլու) եթէ միեւնոյն քաղաքի մէջ բնակին , փրօղէսդ ընողը մինչև տասնըհինգ օր վերջ՝ տեղւոյն Առեւտրական դատարանին և կամ ստակը ուր տեղ որ վճարելու պայման եղած է , հոն դիմելու և դատ վարելու պարտաւոր է . հակառակ պարագային այլեւս փրօղէսդին զօրութիւնը չմնալով կ'ոչնչանայ : Իսկ եթէ բնակավայրերը իրարմէ հեռու են , այն պարագային հեռաւորութեան համեմատ ժամանակը կ'երկարաձգի :

Փոխգիրը և կամ հրամանի մուրճակը փրօղէսդի տրուած միջոցին , պաշտօնեան՝ ներկայացուցուած մուրճակին պարունակութիւնը նոյնութեամբ ընդօրինակելով իրենց յատուկ պաշտօնէին միջոցաւ պարտապանին կը ղրկէ և դրամ կը պահանջէ :

Պարտապանն ալ անոր դէմ իր ունեցած պատասխանը կրնայ գրելով ետ վերադարձնել :

Ը. Գ Լ Ո Ւ Խ

Ս Ն Ա Ն Կ Ո Ւ Թ Ի Ի Ն (ԻՖԼԱՍ)

Վաճառական մը երբ նկատէ թէ, այլեւս չի պիտի կրնայ իր վճարումները կանոնաւորապէս շարունակել, այն պարագային պարտաւոր է վճարումները դադարեցուցած օրէն սկսեալ՝ մինչ երեք օր վերջ, իր հաշուեկշիռը պատրաստելով տեղւոյն Առեւտրական դատարանին մատուցանել և իր սնանկութիւնը յայտարարել :

Դատարանը՝ անոր այս յայտարարութեան վրայ, անոր սնանկութեան վճիռ կու տայ, և լրագիրներու և ուրիշ ազդարարագիրներու միջոցաւ անոր սնանկութիւնը կը հրատարակէ :

Վաճառական մը անկարող ըլլալով հանդերձ՝ երբ դեռ իր գործերը շարունակէ, պահանջատէրները ազատ են, ուզեն կրնան զայն դատի կոչելով իրենց պահանջը ուզել. և նոյն իսկ հակառակ պարագային անոր սնանկութիւնը պահանջել :

Պարտապանը՝ եթէ դատարանին մէջ իր սնանկ չըլլալուն վրայ պնդէ և ստորագրութիւնն ալ իրեն ըլլալը խոստովանի, պէտք է որ, իր կարողութիւնը իրապէս հաստատելու համար, պահանջ

ըռած գումարը դատարանին սնտուկը աւանդ ձգէ (սեքօզիթ) : Ու յետոյ խնդրոյն դէմ իր ունեցած առարկութիւնները ընէ, ապա թէ ոչ դատարանը անիկա սնանկ կը հռչակէ :

Փրօզէսդի բաժնին մէջ ինչպէս խօսեցինք, փրօզէսդի նպատակը փոխգիրի խնդրոյ մէջ՝ քաշուողի չընդունելը հաստատելու, իսկ հրամանի մուրհակներու խնդրոյն մէջ՝ եթէ փոխանձողներ (նրանքայ) կան, զանոնք պատասխանատուութենէ չփախցնելն և թէ փրօզէսդ եղած օրէն գումարին տոկոս պահանջելն է : Իսկ եթէ խնդրոյն մէջ վերոյիշեալ պարագաներէն և ոչ մէկը կայ, պահանջատէրը, կրողը ազատ է, ուզէ փրօզէսդ կ'ընէ, ուզէ չընել. այս պարագային մէջ՝ մինչև հինգ տարի իր իրաւունքը վերապահեալ է : Հրամանի մուրհակով ալ դատարանին կրնայ դիմուիլ և նոյն իսկ սնանկութիւն պահանջուիլ :

Դատարանին դիմելով ընելիք պահանջումը երկու կերպ է :

Առաջին՝ պարզ պահանջում (սսիէն քսինի), այսինքն պահանջատէրը հակառակ պարագային սնանկութիւն չպահանջել :

Երկրորդ, սնանկութեան պահանջում, որն որ խնդրագրին մէջ կը գրէ. « Պահանջիս գումարը անմիջապէս վճարել, չկրցած պարագային՝ սնանկութիւն կը խնդրեմ : » Պահանջատէրը այս երկու կերպերէն որն որ ուզէ զայն կրնայ ընտրել :

Երկրորդ կերպ պահանջում ընելու համար՝ անպատճառ պարտապանին ստորագրութիւնը ի ձեռին ունենալու է : Այս պահանջին վրայ, դատարանը ստորագրութիւնը պարտապանին կը

ցուցնէ, պարտապանը եթէ ստորագրութիւնը իրեն
 ԸԱՎԸ (ստատովանի), բայց պարտքի էութեան դէմ
 այլեայլ առարկութիւններ յարուցանէ, նախ պէտք
 է որ նոյն գումարը դատարանի քով աւանդ ձգէ,
 և ապա իր առարկութիւն ընէ : Իսկ եթէ ստորա-
 գրութիւնը իրեն ԸԱՎԸ ուրանայ, նոյն պա-
 հուն երկուստեք մէկ մէկ քննիչ (միւլմէյիզ) կ'ընա-
 րեն, երրորդ մըն ալ՝ կամ իրենց համահաճու-
 թեամբ և կամ դատարանի ընտրանօք ընտրուելով,
 անոնց կը յանձնեն պէտք եղած քննութիւնը . ա-
 նոնք ալ յիշեալ ստորագրութիւնը՝ կանխաւ ուրիշ
 տեղ ստորագրուած ստորագրութիւններու հետ կը
 բաղդատեն, (բայց պայման է որ այն ստորագրու-
 թիւնները վաւերական տեղեր սրբագրուած ըլլան
 որպէսզի պաշտօնական հանգամանք ստացած ըլլան)
 ու յետոյ պարտապանին գրերը մուրհակի մէջի ստո-
 րագրութեան հետ կը բաղդատեն : Քննիչ յանձնա-
 ժողովը, կատարած այս բաղդատութեան արդիւնքը
 դատարանին կը հաղորդէ : Եթէ ստորագրութիւնը
 արդարեւ պարտապանին ԸԱՎԸ ստուգուի, պար-
 տապանը՝ յայնժամ պարտքին փոխարէն կամ հնչուն
 դրամ աւանդ պէտք է ձգէ դատարանի մտուակը
 և կամ սնանկանայ :

Պարտապանը եթէ ստորագրութեան կեղծ ԸԱ-
 ՎԸ առարկէ, որ շատ փափուկ և դժուար խըն-
 դիր մըն է . դատարան եթէ համոզուի գոյացնէ,
 դատը Պատժական ատեանին կը ղրկէ, ապա թէ
 ոչ անոր համեմատ վճիռ կու տայ :

Թ. Գ Լ Ո Ի Խ

ՍՆԱՆԿՈՒԹԻՒՆ ՆԱՅՈՂ ԴԱՏԱՐԱՆԸ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ (Թիմարէք) ԵՐԵՔ
 բաժանում ունի .

Ա. Առաջին Առեւտրական դատարան (Պիլինճի
 Թիմարէք), որ Օսմանեան հպատակներուն կողմէն
 ոչ-Օսմանեան հպատակներու վրայ և փոխադարձա-
 բար բացուած դատերը կը նայի : Այս դատարանը
 Խառն ժողով ալ (մեւլիսի միւլիսիլիք) կը կոչուի .
 որովհետեւ ամէն կառավարութիւն, իրեն կողմէ
 ընտրուած երկու անդամ ունի հոն, որոնք միմեկ
 իրենց հպատակներու վերաբերեալ դատերու մէջ
 ներկայ կը գտնուին :

Այս դատարանը վկայ չունկընդրեր, ինչպէս
 նաև սնանկութեան վճիռ չի տար : Հազար զրուշէ
 պակաս դատերն ալ մեհեյիթի օրինօք կը դատէ :

Բ. Առեւտրական դատարան (Թիլինճի Թի-
 մարէք), որ զուտ ցամաքային վաճառականու-
 թեան վերաբերեալ գործերը կը նայի և սնան-
 կութեան վճիռ ալ կու տայ . վկայ ալ կ'ուն-

կընդրէ և շատ կէտերու մէջ Ուսուլը մուհաֆեմէի և Մեհեկլիի օրինաց տրամադրութեանց ալ կը հետեւի :

Գ. Ծովային Առեւտրական դատարան (Թիւնարեթի Պահրիե), այս ալ զուտ ծովային վաճառականութեան և ծովային գործերու վերաբերեալ խնդիրները կը նայի, և ճիշդ Իֆիենճի Թիւնարեթի պէս Մեհեկլի և Ուսուլը մուհաֆեմէի տրամադրութեանց կը հետեւի :

Վերջին տարիներս Կայսերական Բարձրագոյն հրամանով մը, այս դատարանին իրաւասութեան վրայ աւելցուեցաւ նաև զուտ սնանկութեան վերաբերեալ գործերը. այսինքն՝ պահանջատիրոջ բողոքին վրայ, Ծովային դատարանը, բողոքեալ պարտապանը կը կանչէ. պարտապանը դատարանին ներկայանալու պարտաւոր է. ապա թէ ո՛չ դատարանը անոր մասին բացակայութեան (դիւնապիւն) սնանկութեան վճիռ կու տայ, առժամանակեայ հաշուեյարդարներ (պլնեթիֆ) կը կարգէ, գործատեղին (մաղապան) կը կնքէ և գործին օրինական ընթացքը կը շարունակէ, լրագիրներու միջոցաւ անոր սնանկութիւնը կը յայտարարէ, և մինչև իսկ սնանկը ձեռք բերելով կը բանտարկէ. վերջէն սնանկացեալ պարտապանը՝ այս սրոյժման դէմ վերակոչում (իյթիրագ) չի կրնար ընել և ինչպէս պատեհ առիթին պիտի խօսինք սնանկութիւնը ետ առնելու համար ամբողջ իր պահանջատէրներու գոհացում տալով, հաճութիւններն առնելու կը պարտաւորի : Իսկ եթէ բողոքեալ պարտապանը դատարանին ներկայանայ, նախ դատարանը ձեռնհասութեան

(շլազիֆե) առարկութիւն մը յարուցանէ այն ատեն ընդհանուր դատախազը (միսսսայի ումուռի) հրաւիրելով անոր ալ տեսութիւնը ունկնդրելէ յետոյ, խնդրոյն լուծումը իրեն իրաւասութեան պատկանիլը, կամ ո՛չ, կ'որոշէ, խնդրոյն իրեն իրաւասութեան պատկանիլը որոշելէն յետոյ, բողոքուած ստորագրութիւնը պարտապանին կը ցուցնէ և խնդրոյ էութեան մասին հարցումներ կ'ընէ : Բողոքեալը, երբ ստորագրութիւնը և կամ խնդրոյ էութիւնը խոտոտլանի (իգրար քեքրակ) բայց անոր դէմ ինչ ինչ առարկութիւններ ընէ (բացառեալ կեղծութեան առարկութիւն) դատարանը անոնցմէ և ոչ մէկին ալ կարեւորութիւն տալով, բողոքեալին կ'առաջարկէ, «կարողութեան տէր ըլլալիդ հաստատելու համար պէտք է որ այն գումարը բերէք դատարանին սնտուկը աւանդ (սեքօլի) ձգէք և կամ թէ սնանկանաք :»

Բողոքեալ պարտապանը, այս երկու պայմաններէն մէկը կամ միւսը ընդունելու պարտաւոր է : Երբ յիշեալ գումարը դատարանին աւանդ ձգէ, իր կարողութեան տէր ըլլալը իրապէս հաստատած կ'ըլլայ, որով դատարանը (թիւնարեթ պահրիե) խնդրին դէմ եղած առարկութիւններու քննութիւնը և լուծումը իր իրաւասութեանէն դուրս համարելով, դրամը իր սնտուկը կը պահէ և դատը իրմէն մերժելով, Առեւտրական դատարանին կը յանձնարարէ. որովհետև այս ծովային դատարան (թիւնարեթ պահրիե) ցամաքային սնանկութեան վերաբերեալ գործերու մէջ ունեցած իրաւասութիւնը միմեկ բողոքեալ պարտապանի մը կարողութեան տէր ըլլալը կամ չըլլալը ստուգելն է .

ապա թէ ոչ, ուրիշ առարկութիւններ և վէճեր չ'ընենք :

Այն ժամանակ բողոքող պահանջատէրը՝ երկրորդ դատարանին (իֆիւնձի քիւնարեք) դիմելու և պարտապանը հոն կանչելու պարտաւոր է . հոս պարտապանին առարկութիւնները կը քննուին, եթէ բանաւոր նկատուին, ծովային դատարանի (քիւնարեք պահրիւե) քով աւանդ ձգուած գումարը պարտապանին վերադարձնելու որոշում կու տան . իսկ եթէ ոչ, նոյն գումարը բողոքող պահանջատիրոջ յանձնուելու վճիռը կու տայ . որուն վրայ այս կամ այն կողմը ծովային դատարանին դիմելով աւանդ գտնուած դրամը պահանջելու իրաւունքը կը ստանան :

Բայց եթէ բողոքեալ պարտապանը՝ ծովային դատարանի մէջ առանց առարկութեան պարտքը հատուցանէ այլ եւս սնանկ չըլլար: Իսկ եթէ գումարը աւանդ չկարողանայ ձգել, դատարանը անիկա սնանկ կը հռչակէ, ինչպէս վերը բացակայութեան մասին խօսեցանք, բոլոր օրինական գործողութիւնները մինչև ինչորոյն վախճանը ինք կատարելու իրաւունք կունենայ :

Երկրորդ դատարանը (իֆիւնձի քիւնարեք), ծովային դատարանին մէջ կատարուած այս ամէն օրինական ձեւակերպութիւնները կրնայ կատարել, միանգամայն սա առաւելութիւնն ալ ունի որ, վէճի նիւթ եղած գումարը՝ իր քով աւանդ ստանալէն վերջ, պարտապանին յառաջ բերած առարկութիւններու քննութիւնն ալ կը կատարէ, և անոր համեմատ դրամը ո եւ իցէ կողմի կը յանձնէ, իսկ եթէ բողոքեալը սնանկանայ, նոյնպէս մինչև

ինչորոյն վախճանը՝ օրինական գործողութիւնները կատարելու իրաւունք ունի: Այս դատարանը՝ եթէ սնանկութիւն պահանջուած չէ, աւանդ չ'պահանջեր:

Ահաւասիկ թէ ինչո՞ւ համար պահանջատէրներէն շատերը ծովային դատարանին դիմել աւելի կը նախընտրեն, անոր պատճառը պարտապանին անմիջապէս վճարել տալ կամ սնանկացնելն է: Գաւառներուն մէջ առեւտրական դատարանին վերոյիշեալ բաժանումները թէև չկան, բայց տեղական Առեւտրական դատարանը — և եթէ դուտ առեւտրական չկայ, — պարզ դատարանին (հուզուզի) հետ խառն կազմուած Առեւտրական դատարանը այս ձեւակերպութիւնները կատարելու և միանգամայն ծովային գործերն ալ նայելու իրաւունք ունի :

Սնանկացեալ մը՝ սնանկութեան օրէն սկսեալ իր տրամադրութեան ներքե գտնուած ապրանքները, կալուածները և ուրիշներու քով գրտնուած պահանջները գանձելու իրաւունքներէն կը զրկուի: Ասոնք՝ պահանջատէրներու (աւսուսիւս աշխարհ) հաշւոյն կ'անցնին (աւսուսիւս աշխարհ) :

Սնանկի մը հրապարակի վրայ եղած պարտքերը, ենթադրենք որ գանձելու դեռ բաւական ժամանակամիջոց պահանջեն, սակայն սնանկութեան աւթիւ՝ այլ եւս այն վճարաժամին կարեւորութիւն չ'մնայով՝ միւսներու պէս անմիջապէս գանձելի կ'ըլլան :

Սնանկութեան օրէն սկսեալ՝ սնանկի մը թէ մեծաշնորհեալ (իւթիազը), (այսինքն անոնց քով որ գրաւ կը գտնուի) և եթէ պարզ պարտքերու տոկոսներ կը դադրին :

ժ. Գ Լ Ո Ի Խ

ՀԱՇՈՒԵՅԱՐԴԱՐՆԵՐԸ ԵՒ ՓՈԽԱՆՈՐԴՆԵՐԸ

(ՍԸՆՏԻՔ ՎԷՆ ՎԷՔԻԼԼԷՐ)

Դատարան՝ պարտապանի սնանկութիւնը վրձնելէն անմիջապէս յետոյ, գործի մեծութեան համեմատ՝ մէկէն-երկու հոգի և երբեմն ա՛լ աւելի, առժամանակեայ հաշուեյարդար - փոխանորդներ (մուլազաք սրնիֆիեր) կը կարգէ :

Ասոնք՝ դատարանի գրագիրներէն և սնանկի պահանջատէրներէն ալ կրնան ըլլալ : Ասոնց գործառնութեան և գործի ընթացքին վրայ հակելու համար, դատարան՝ իր անդամներէն մէկն ալ (ժիւժ գուրիսեր) կը կարգէ :

Այն առժամանակեայ հաշուեյարդար-փոխանորդները (մուլազաք սրնիֆիեր) իրաւունք ունին դատարանի արտօնութեամբ սնանկը իսկոյն բանտարկել, անոր սենեակը (մսղսզսն) գոցել, տոմարներն ու թուղթերը գրաւել և եթէ ուրիշ տեղեր ճիւղեր ունին զանոնք ալ դատարանի միջոցաւ հեռագրով գոցել տալ :

Բանտարկեալ սնանկը՝ կրնայ անձին և եթէ փախչելու ըլլայ դատարանին որոշմամբ գուժար մը տուժելու պայմանով երաշխաւոր մը ներկայացնելով բանտէն արձակուժ խնդրել :

Իսկ երբ չկարողանայ երաշխաւոր ներկայացնել, ու առժամանակեայ փոխանորդներ ալ զայն հաստատեն, այն ատեն դատարանը՝ բանտարկեալ սնանկը կը կանչէ և իր հսկողութեան տակ հաշուեկշիռ (պիղսնջօ) շինել կու տայ : Ասկէ վերջ առանց երաշխաւորութեան և կամ պարզ անձին երաշխաւոր առնելով կ'արձակէ :

Եթէ սնանկը հաշուեկշիռ հանելու դժկամակի, դատարանը անիկայ բաւական երկար ատեն կրնայ բանտարկել, այն պարագային փոխանորդները իրենք հանելու կը պարտաւորին :

Առժամանակեայ փոխանորդ-հաշուեյարդարներ՝ ձեռքերնին ունեցած հաշուեկշիռին յենելով՝ լրագիրներու միջոցաւ և թէ պահանջատէրներուն զատ զատ ծանուցագիրներ ղրկելով՝ մինչև տասնըհինգ օր վերջ՝ ամբողջ միասին դատարան դալու և ժողով կազմելու հրաւէր կ'ընեն :

Առժամանակեայ հաշուեյարդար-փոխանորդներ՝ որոշեալ օրին եկած պահանջատէրներու հետ՝ ժիւժ-գումիսէրի նախագահութեան ներքե ժողով կազմելով պատրաստուած հաշուեկշիռի վրայ խորհրդակցութիւններ կ'ընեն, եթէ դուրս մնացածներ կան զանոնք ալ արձանագրելէն յետոյ, նորէն մնայուն հաշուեյարդար փոխանորդներու (աւալթեքիս սրնիֆիեր) ընտրութեան կը ձեռնարկեն : Հաշուեյարդար-փոխանորդները այս ընտրութեան մէջ քուէ չունին :

Հաւաքուած պահանջատէրները այս ընտրութեան մէջ ազատ են, եթէ յարմար դատեն, նախորդ առժամանակեայ փոխանորդ հաշուեյարդարները մնայունի կը վերածեն և իրենց պաշտօնին

կը վերահաստատեն (մուշվազարեկն արևիֆիեր ասա-
ղեթե քանվիլ հեթեր) : Իսկ եթէ չուզեն, կրնան
զանոնք պաշտօնանկ ընելով՝ անոնց տեղ ուրիշներ
ընտրել : Այս պաշտօնին պահանջատէրներէն ալ
կրնան ընտրուիլ, որոնք վերջէն գործին կարեւո-
րութեան համեմատ՝ վարձք առնելու իրաւունք
չունին : Իսկ փաստափանններ իրաւունք ունին :

Եթէ պահանջատէրեր (ասնապը մաղղուպիերի)
անխիֆնբու պաշտօնի կիրառութեան մէջ՝ թերու-
թիւն և զեղծումներ նշմարեն, կրնան դատարանին
դիմելով զանոնք պաշտօնանկ ընել : Մնանկին բա-
րեկամները այս պաշտօնին չեն կրնար կարգուիլ :

Եթէ կանխաւ առժամանակեայ փոխանորդնե-
րու միջոցաւ սնանկին սենեակը գոցուած չէ և կամ
թերութիւններ մնացած ըլլայ՝ վերանորոգուած
մնայուն հաշուեյարդար-փոխանորդներ (ասաղեթեկն
արևիֆիեր) զանոնք ընելու պարտաւոր են :
Իսկ եթէ եղած է, մնացեալն իրենք կը շարու-
նակին :

Մնայուն հաշուեյարդար-փոխանորդները պար-
տաւոր են սնանկը հարցաքննել թէ, սկիզբէն ի
վեր, ի՞նչ գործեր ըրած է, ո՞րչափ դրամագլուխի
տէր եղած է, որո՞նց հետ ընկերութիւն ըրած է,
իրեն սնանկութեան շարժառիթը ի՞նչ է. ո՞ր ատե-
նէն սկսեալ վճարումներ ընելու դժուարութիւն
զգացած է :

Ինչո՞ւ համար երեք օրուան մէջ դատարանին
չէ հաղորդեր. այն օրէն սկսեալ ի՞նչ գնում և
վճարումներ ըրած է. այժմ ընկեր ունի՞ թէ ո՛չ,
ո՞րչափ պարտք, ո՞րչափ պահանջք և ո՞րչափ պատ-
րաստ ապրանք ունի. ընկերութեան մակդիրը

(իւնվան) ի՞նչ է և ընկերութիւնը ո՞ր տեսակէն է .
գործատուին ո՞ւր է (քիմարեթկեան) տոմարներ
ունի՞ թէ ո՛չ, և ո՞ւր են և ուրիշ պէտք եղած հար-
ցումներ ուղղել :

Մնանկը ասոնց պատասխանելու, ինչպէս նաև
շարունակ փոխանորդներուն ներկայանալու և
անոնց աշխատութեանց ջակցելու պարտաւոր է :

Ինչպէս վերը ըսինք, սնանկ մը սնանկանալէն
վերջ՝ այլ եւս իր ապրանքներու, կալուածներու
տիրապետութենէն կը զրկուի ու չկրնար իրեն պա-
հանջը գանձել, վճարում ընել, մինչև իսկ ո՛ւր է
խնդրոյ մէջ դատարաններուն առջև ո՛չ դատ
վարել և ո՛չ ալ վկայութիւն տալ. այլ այս ամէն
իրաւասութիւնը հաշուեյարդար - փոխանորդնե-
րուն կ'անցնի : Ասոնք բայտրձակ իրաւունք ու-
նին սնանկի կողմէն դատ վարել, անոր պահանջ-
ները գանձել, ապրանքները և կալուածները կառա-
վարել, սնանկի վրայ բողոք եղած միջոցին՝
շահի պահանջատէրներու (մասս մեկեֆասարընա)
դատավարութեան մտնալ, սնանկի եկած նամակ-
ները նամակատունէն (փոսթախսնեհեկ) առնել կար-
դալ, պէտք տեսած պարագային սնանկը բան-
տարկել և վերջապէս մինչև խնդրոյ վախճան՝
պէտք եղած հեղինակութիւններ և տնօրէնու-
թիւններ ընել : 1500 ղուրուչէն պակաս խնդիր-
ները իրենք վճուապէս լուծել, անկէ աւելի պա-
կասները դատարանին յանձնել :

Եթէ սնանկի ապրանքները դիւրաւ վաճառելի
տեսակին պատկանին, փոխանորդները կրնան դա-
տարանի արտօնութեամբ զանոնք ծախել և ար-
ժէքը դատարանի սնտուկին մէջ պահել :

Եթէ վաճառական մը՝ սնանկութենէն առաջ
և կամ թէ վերջ մեռնի, յիշեալ պարտականու-
թիւնները իրեն ժառանգորդներուն կը վիճակին :

Սնանկի մը մահը կամ անյայտացումը հաշուե-
յարդար փոխանորդներու վրայ (սրնսիֆիեր իզգերիմե)
ո և է ազդեցութիւն չընեք և անոնց գործառնու-
թեանց դէմ արգելք մը չկրնար յարուցանել :

Սնանկ մը՝ եթէ իր գործին մէջ խարդախութիւն
գործած չէ, այլ բանաւոր պատճառով մը սնանկա-
ցած է, իրաւունք ունի իր ապրանքէն ժամանակի
մը համար իրեն տան համար ապրուստը պահանջել :

Ժ Ա. Գ Լ Ո Ի Խ

ԱՊՐԱՆՔՆԵՐՈՒՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ
(ՖէՔՔ Ի ՄԷՅՈՂԻՐ ՎԷ ԹԱՀՐԻՐ ԷՄՎԱԼ)

Սնանկի մը գործատեղին (մադագան) գոյուե-
լէն երեք օր վերջ, մնայուն հաշուեյարդար-փո-
խանորդները՝ պարտաւոր են սնանկի ներկայու-
թեան անոր սենեակը բանալ, մէջը գտնուած ապ-
րանքները, քոյքերը գրել (թահրիր հելվայ երմեխ) :
Սակայն սնանկի տան վերաբերեալ բաները դուրս
պէտք է հանեն :

Սնսիֆներ՝ ի հարկին այն ձիւղին հմուտ ան-
ձերը իրենց օժանդակութեան կրնան առնել, եթէ
սնանկը բացակայ է, այս գործողութիւնները
անոր բացակայութեան ալ կրնան ըլլալ : Գործի
ձեռնմուխ եղող փոխանորդները՝ մինչև տասնը-
հինգ օր, սնանկի հարցաքննութեան համառօտ
բաժանդակութիւնը, սնանկի գործառնութեանց
մէջ խարդախութիւն ըլլալը և կամ ո՛չ և ո՛ր տե-
սակին պատկանիլը — վասն զի սնանկ երեք
կերպ կրնայ սնանկանալ, և ասոր համեմատ կը
կոչուի Ա. Խրուամբ սնանկ (միւֆլիս հագիգի), Բ.
Թերուքիւն գործող սնանկ (թագիտարը միւֆլիս),
Գ. Խարդախ սնանկ (հիլիլի միւֆլիս), որոնց մա-
սին վերջէն պիտի խօսինք: — Որոնց գործի ընթացքի
մասին իրենց կազմած գաղափարներն ու տեղե-
կութիւնները պէտք է գրաւորապէս դատարանին
հաղորդեն :

Ժ Բ. Գ Լ Ո Ի Խ

ՍՆԱՆԿԻ ՊԱՐՏՔԵՐՈՒՆ ՔՆՆՈՒԹԻՒՆ
(ԹԱՀԳԻԳԸ ՏԻՒՅԻՒՆ)

Վաճառականի մը սնանկութեան հրատարա-
կութենէն սկսեալ պահանջատէրները՝ իրենց ի ձեռին

ունեցած մուրհակներն ու պահանջեթուղթերը ուզեն կը տանին դատարանին կը յանձնեն և կամ փոխանորդներուն կը յանձնեն անոնցմէ ընկալագիր կ'առնեն . իսկ եթէ չուզեն՝ կրնան սպասել որ փոխանորդները լրագիրներու միջոցաւ պարտքերու արձանագրութեան (քանդիզ օրդին) օրը ծանուցանելով զիրենք դատարան հրաւիրեն :

Մնայուն հաշուեյարդար փոխանորդներ՝ պէտք է որ լրագիրներու միջոցաւ և դատ դատ ծանուցագիրներով, պահանջատէրներուն զեկուցանեն արձանագրութիւն կատարուելիք օրը և տեղերու հեռուորութեան համեմատութեամբ զանոնք առնուազն մինչ քսան օր դատարան հրաւիրեն :

Հաշուեյարդար փոխանորդներ՝ այս 20 օրուան ընթացքին մէջ , իրենց ներկայացուած թուղթերը առանց ո և է դիտողութեան կ'ընդունին . վերջին երեք օրերուն մէջ պահանջատէրները , անձամբ և կամ փոխանորդներ զրկելով դատարանին ներկայանալու են : Հաշուեյարդար փոխանորդները ժիւժ-գումիսէրի նախագահութեան ներքեւ հաւաքուելով , անանկի և պահանջատէրներու ներկայութեան՝ իրենց ունեցած հաշուեկշիռին յենլով ներկայացած պարտքերուն ստոյգ և անստոյգ ըլլալուն քննութիւն կը կատարեն :

Մեկաւեռու հետ պահանջագրեր (իմքիազու ալանազրը) , այսինքն իրենց քով գրաւ գտնուած պահանջատէրերը ինչպէս նաև գրագրութեան վարձքը և սենեակին վարձքը պահանջողներն ալ դիմելու և իրենց պահանջը արձանագրել տալու պարտաւոր են :

Արձանագրուելու համար ներկայացած առնե-

լիքի մը դէմ՝ թէ՛ անանկ թէ՛ հաշուեյարդար փոխանորդներ և թէ՛ պահանջատէրեր փոխադարձաբար իրարու դէմ առարկութիւն կրնան ընել :

Այն պարագային հաշուեյարդար փոխանորդներ՝ վէճի նիւթ եղած խնդրոյն լուծումը այլ եւս իրենց ձեռնհասութենէ վեր նկատելով, վիճող երկու կողմերէն՝ այն կողմին որ աւելի շահ ունի , անոր կը պարտաւորեցնեն որ դատարանին դիմում ընէ :

Եթէ յառաջ բերուած առարկութիւնը հաշուեյարդարներու կողմէն չէ, այլ պահանջատէրերու կողմէն է , հաշուեյարդար-փոխանորդները զայն իրրեւ վիճելի (մարագալի) կ'արձանագրեն, զոր այն ատեն գործի ստուգութիւն և վճիռը դատարանին կը մնայ :

Հաշուեյարդար-փոխանորդներն ալ անանկի շահուն (մաւայեւ) վնասակար եղած կէտին մէջ գործը դատարանին կը յանձնեն , այն պարագային իրենք դատարանին կը ներկայանան դատ կը վարեն . փոխանորդներուն կողմէ դատ վարելու պէտք եղած կէտերու մէջ ժիւժ-գումիսէրի ներկայութեան պէտք չկայ :

Հաշուեյարդար փոխանորդներուն (սիսիֆիտիս) որոշման համեմատ՝ դատարանին զիմելու պարտաւոր եղող կողմը պէտք է պաշտօնապէս խնդրագիր տայ ու փոխանորդները դատարանին կոչել տայ :

Դատարան երկուստէք դեր ու դէմ վիճաբանութիւններ ունկնդրելէ վերջ զարժանը կը վճռէ :

Այս դիմումը կրնայ մասայի գործերու ընթացքը մինչև խնդրոյն վախճան՝ կասեցնել . ասոր վրէժիւրը դատարանի կամքէն կախում ունի իսկ եթէ դատարան մասայի ընթացքին կասեցման վճիռը

չըտայ . մասան իր ընթացքը կը շարունակէ, որով վերջէն դատարանը կթէ պէտք տեսնէ երկու խնդիրը կրնայ միացնել :

Մնանկ մը՝ եթէ չուզէ իր պահանջատէրերուն հետ գործը իրաւախօհութեամբ (ֆոնգորսաք) կարգադրել և կամ ձգէ անյայտանայ , այն պարագային՝ սնտիքներ իրաւունք ունին պաշտօնական հրատարակութեամբ և առանձին հրաւէրներով պահանջատէրէր քահգիզը, սիւլիւնի հրաւիրել : Եւ սնանկին եթէ շարժական կամ անշարժ կալուածներ կան զանոնք ծախել : Գոյացած ստակէն նախ սնանկութեան առթիւ տեղի ունեցած դատի ծախսերը , մաղագայլի և գրագիրի և այս կարգի մենաշնորհեալ (խնթիագրի) վարձքերը վճարել և ապա մնացեալ մասը պահանջատէրէրու վրայ (դուրեմարեկ քեյզի քիմեֆ) իրենց պահանջի համեմատութեամբ բաժնել :

Նոյնպէս եթէ սնանկին տեղ մը աւանդ և կամ գրաւ դրուած ապրանքներ կան, սնտիքները իրաւունք ունին այն ապրանքները ետ առնելով ծախել , ու սնանկի վերոյիշեալ պարտքերը վճարելէն վերջ աւելցածը մասային դնել :

Պահանջատէրէրէն առնոնք՝ որք իրենց առնելիք մասային արձանագրել տալու համար յատկացուած պայմանաժամին մէջ մասային չեն ներկայացրել , այլ եւս բաշխման գործողութեան չեն կրնար մասնակցիլ , բայց եթէ դատարանին դիմելով իրենց չներկայանալու պատճառը բանաւոր պատճառէ մը բղխած ըլլալը կարենան հաստատել , այն պարագային անկէ վերջ կատարուելիք բաշխումներուն կրնան մասնակցիլ :

Ժ Գ . Գ Լ Ո Ի Խ

Ի Ր Ա Ի Ա Խ Ո Շ Ո Ի Թ Ի Ի Ն

(ԳՈՆԳՈՐՍԱԹՕ)

Մնանկին և պահանջատէրներուն մէջ եղած կարգադրութեան (գոնգորսաք) կ'ըսուի :

Պահանջատէրներուն հետ համաձայնելու և գոնգորտաթօ ընելու և կամ չընելու գործը սնանկի կամքէն կախում ունի :

Մնանկը եթէ գործը գոնգորտաթոյով կարգադրելու փափաք յայտնէ , սնտիքներ յատուկ օր մը որոշելով՝ լրագիրներու միջոցաւ սնանկի պահանջատէրները այն օր ժողովի կը հրաւիրեն, քնականաբար պէտք է գիտնալ որ այս կերպ պաշտօնական հաւաքումները դատարանի մէջ և կամ իրեն յատուկ սենեակին մէջ կ'ըլլան :

Որոշեալ օրը՝ եկող պահանջատէրները ժիւժ-գումիւէրի նախագահութեան և սնտիքներու ընկերակցութեամբ՝ ժողով կը կազմեն . հոն՝ սնտիքները առաջին անգամ սնանկի գործերու ընթացքին ու վիճակին և սնանկութեան տեսակին⁽¹⁾, պատրաստ առնելիքի ու տալիքի և ապրանքներուն,

(1) Մնանկութիւն երեք տեսակ ըլլալով՝ այս կէտին վրայ պատեհ առիթին պէտք եղած գաղափարը պիտի տանք : Որուն որ տեսակէն ըլլալը սնտիքները պիտի որոշեն (Գլուխ ԺԱ.)

մասին իրենց կատարած քննութեան արդիւնքը տեղեկագրով կը հաղորդեն և հետեւաբար հար- իւրին քանի տալու կարողութիւն ունենալ կը պարզեն :

Մնանկ՝ կրնայ փոխանորդներուն (սրկիֆ) և կամ պահանջատէրներուն առաջարկած կարողու- թեան դէմ, իր կրած վնասները և աղէտները մէջ բերելով՝ առաջարկուած գումարէն աւելի զեղջ և վճարաժամին ալ աւելի երկարաձգութիւն խնդրել :

Պահանջատէրները կրնան այս առաջարկը չընդունել և ինչպէս նաև սնանկի վարած գոր- ծանութեանց թերութիւնները (քազախրաթ) չներել :

Սակայն թէ՛ որ պարագայի մէջ ալ որ ԸԱայ ձայնի մեծամասնութիւն կազմելու համար ան- պատճառ անձի և գումարի մեծամասնութիւնը անհրաժեշտ է . այսինքն մեծամասնութիւն կաղ- մելու համար՝ ներկայացող և իրենց առնելիքը ար- ձանագրել տուող պահանջատէրներէն թէ գումարի և թէ անձի չորսէն երեք, որ է $\frac{3}{4}$ կազմած ԸԱան Առանց գումարի անձի մեծամասնութիւն և առանց անձի գումարին մեծամասնութիւնը ոչինչ է :

Մենաշնորհեալ պահանջատէրեր (խրթիսազը ալաճազըրար) թէև առնելիքները սնանկի մասային արձանագրել տալու պարտաւոր են . բայց այս համաձայնութեան մէջ ձայն չունին . եթէ մենա- շնորհութեան իրաւունքնին ձգեն, այն ատեն միւս պահանջատէրներուն պէս իրաւասութիւն կ'ըս- տանան :

Պահանջատէրները թէ՛ ԸԱալ բացարձակ առա-ւելութեամբ և թէ՛ ԸԱայ մեծամասնութեամբ

սնանկի առաջարկած կարգադրութեան կերպը ընդունած պարագային (զոնգորտարօ) պայմանագիր մը կը խմբագրուի , որն որ ներկայ եղող պահան- ջատէրներն և կամ իրենց փոխանորդներն, ինչպէս նաև ժիւժ-գօմիսէր , սնտիքներ և սնանկ կը ստո- րագրեն , որով պահանջատէրներ իրենց գոհ եղած մասէն անդին մնացեալ մասը և մինչև այն օր եղած հաշուական ամբողջ իրաւունքնին և ներկայ ապ- րանքները սնանկին կը ձգեն , ու սնանկն ալ փո- խադարձաբար կը խոստանայ իր ստանձնած պարտքը որոշեալ ժամանակին մէջ վճարել , որուն իւրա- յիսգա (անպարտագիր) կ'ըսուի :

Գոնգորտաթոյի մէջ որոշուած քանակէն աւե- լի՝ դուրսէն կարգադրութիւն ընելը բացարձակա- պէս արգիլեալ է , ով որ համարձակի ընել և կամ անոր միջնորդէ՝ իրենց ըրած աւելի կ'արգադրու- թիւն անվաւեր ԸԱալով հանդերձ՝ իրենք ալ ծանր պատժոյ կ'ենթարկուին :

Պահանջատէրներ համաձայնութիւն գոյացու- ցած պարագային գոնգորտաթոյի գումարը վճարե- լու համար սնանկէն երաշխաւոր կրնան պահանջել, բայց համաձայնութեանէն յետոյ այլ եւս չեն կրնար :

Եթէ պահանջատէրներէն մէկը գոնգորտաթոյի դէմ, սնանկի խարդախութիւնը , կամ աւելի տա- լու կարողութիւնը , կամ ապրանք փախցուցած ԸԱալը և ասոնց նման առարկութիւնները մէջ բե- ռելով բողոքէ , պարտաւոր է գոնգորտաթոյի ստո- րագրուած թուականէն մինչև ութ օր տեղական թիճարէթի դատարանին դիմել :

Դատարանը խնդիրը նկատողութեան կառնէ , եթէ այս առարկութիւնները բանաւոր և ապա-

ցուցեալ գտնէ, կազմուած համաձայնութիւնը կը ջնջէ, իսկ եթէ ո՛չ կը վաւերացնէ: Այս կերպ դատերու մէջ ընդհանուր դատախազն ալ կը հրաւիրուի և անոր առարկութիւնը և զիտողութիւնն ալ կ'ունկնդրուի, բայց անով հանդերձ դատարան՝ անոր զիտողութեան հետեւելու պարտաւոր չէ, այլ ազատ է իր կամքին մէջ:

Դատարանը եթէ բողոքողի փաստերը բանաւոր և հաստատուն գտնէ. այնժամանակ գործին խարդախ սնանկութիւն (հիլիէ) իժշատ) գոյն տալով, գործը ընդհանուր դատախազին կը յանձնէ, զոր անիկայ ալ խնդիրը պատժական ատեանին կը տանի. հոն դատավարութենէ վերջ՝ եթէ նորէն հաստատուի. անանկ՝ պատժական օրէնքներու համաձայն երեք տարիէն աւելի բանտարկութիւն կը կրէ և նախկին գործողութիւնները անվաւեր կը համարուին:

Եթէ գործին մեղսակիցներ կան, անոնք ալ միեւնոյն պատիժը կը կրեն: Իսկ եթէ դատարան՝ բողոքողը ապօրէն գտնէ և կամ այս ութ օրուան ընթացքին մէջ բողոքողներ չըլլան, այն ժամանակ գոնգորտաթօն կը վաւերացնէ (քաւսիզ իսեր), սնանկի վաճառատունը կը բանայ թուղթերը, ատմարները և ապրանքները իրեն կը յանձնէ, եթէ որ և է ապրանքի վրայ արգելում (հաճ) դրուած է անիկայ ալ կը վերցնէ: Եւ սակէ յետոյ սնանկը դարձեալ իր նախկին վիճակին վերադառնալով՝ իր գործերը կը շարունակէ, իր կալուածները կը տիրապետէ, իր հին պահանջները գանձելու և հարկ եղած ատեն դատ վարելու իրաւասութիւն կ'ստանայ:

Յիշատակութեան արժանի է սա կէտ թէ, դատարանը՝ գոնգորտաթօն վաւերացուցած պարագային, իրրեւ մասայի ծախս սնանկներու համար յարմար վարձք մը, (եթէ սնանկին կողմէ դուրսէն գո՛հ ըրուած է, դատարանը այլեւս չուզեր) գոնգորտաթօ եղած գումարին վրայ հարկերին քան դուրուշ իլամի մը ծախս առնելով իրեն որոշումը իլամի մը ձեւով սնանկին կու տայ: Ասկէ վերջ այլ եւս որ և է բողոք անլսելի է: Պարտքերուն քննութեան օրը չներկայացող և իրենց առնելիք արձանագրել չըտուողները՝ այն գոնգորտաթոյի պայմանի տրամադրութեան հպատակելու պարտաւոր են, և համեմատական հաշուով իրեն վիճակած գումարէն աւելի բան մը պահանջելու իրաւունք չունին:

Ժ Դ. Գ Լ Ո Ի Խ

ԳՈՆԳՈՐՏԱԹՈՅԻ ԶՆՁՈՒՄԸ

(ԳՈՆԳՈՐՏԱԹՅՆԸՆ ՖԵՍԵ ՈՒ ԻԼՂԱՍԻ)

Գոնգորտաթօն վաւերանալէն վերջ ալ կրնայ ջնջուիլ, պայմանաւ որ՝ երբ սնանկի խարդախութիւնը (հիլիէ), ապրանք փախցնելը զանազան սուտ պարտապաններ յօրինելով և կամ իր կարողու-

Թիւնը չափազանց փոքրցուցած ըլլալով պահանջատէրերուն խաբելը յայտնուի նոյնպէս ալ սնանկ մը՝ եթէ իր ստանձնած պարտքն ու պարտականութիւնները չկատարէ, պահանջատէրեր բողոքելով վերստին անոր սնանկութիւնը կրնան պահանջել, այս տռիթով դատարանը եթէ գոնգորտաթոյի ջնջման առթիւ տրուած բողոքը արդարացի գտնէ զայն կը ջնջէ, խնդիրը վերստին իր նախկին վիճակին կը վերածէ, նոյն ջնջումը եթէ խարդախութեան տեսակէտով ջնջուած է հրաշխաւորներն ալ պատասխանատուութենէ կ'ազատուին:

Գոնգորտաթօն ջնջելու պէս, դատարան՝ ըստ առաջնոյն ժիւժ-գումիսէր և նոր սնտիքներ կը կարգէ, սնանկը — եթէ խարդախ մըն է — բանտարկել կու տայ, ապրանքները արգելման տակ կ'առնէ, պահանջատէրերը կրկին ժողովի կը հրաւիրէ, սնտիքները փոխել և կամ վերահաստատել կուտայ, եթէ դուրս մնացած ուրիշ պահանջատէրէր կան քահգիզը տխրուց կը կատարէ, արձանագրուած պարտքերու դէմ եթէ ու է բողոք չկայ վերստին արձանագրել կուտայ: Գոնգորտաթօն եթէ խարդախութեան (հիյե) և խարէութեան (դապն) առթիւ ջնջուած է, ալ վերստին գոնգորտաթօ չի կրնար ըլլուիլ, իսկ եթէ խոստումը չկատարելուն առթիւ ջնջուած է, վերստին կրնայ գոնգորտաթօ ըլլալ:

Ժ Ե . Գ Լ Ո Ի Խ

Մ Ի Ա Բ Ա Ն Ո Ի Յ Ի Ի Ն
(Ի Թ Թ Ի Ֆ Ա Գ Վ Է Ե Ա Ի Ի Ն Ի Ո Ն)

Սնանկի կողմէն երբ գոնգորտաթօ ընելու միտում չըցուցուի և կամ միտում ըլլալով պահանջատէրերու մեծագոյն մասի հաւանութեան չարժանանայ. այն ատեն ժիւժ-գումիսէրի և սիտիքներու առաջարկութեամբ՝ թէ մենաշնորհեալ առնելիքի տէրեր և թէ՛ պարզ առնելիքի տէրերը ժողովի կը կոչուին, ասոնք եթէ ուզեն սնտիքները կը պահեն, ուզեն պաշտօնանկ ընելով անոնց տեղ ուրիշներ կը կարգեն, սնանկի մաղազային ուղղութիւնն ու տնօրէնութիւնը այս փոխանորդներուն կը յանձնեն, փոխանորդներն ալ ինչ որ ծախեն և շահին, գոյացած ստակը առնելիքի տէրերուն վրայ գումարի համեմատութեամբ բաժնելու պարտաւոր են, այս պարագային այլ եւս գոնգորտաթօ չըլլար:

Պահանջատէրերէն իւրաքանչիւրը իր նախկին վիճակը վերստանալով, առնելիքը՝ ամբողջութեամբ պահանջելու իրաւունք կ'ունենայ:

Միաբանութեան (խնիւն) որոշումը մէկ ամիսէն վերջ գործադրելի է:

Սնանկը և կամ իր պարտապանները՝ եթէ

մասայի ծախուց, սնտիքներու վարձուց, դատական և այլ ծախուց բաւականալու չափ դումար մը ցուցնեն, այս որոշումը կրնան յեղաշրջել, այսինքն գոնգորտաթօն պատրաստականութեան վերածել :

Մնանկը՝ եթէ կարեկցելի և թշուառ վիճակի մէջ է, իր ապրանքէն մասնաւոր բան մը իրեն ապրուստ կրնայ պահանջել : Մնանկները եթէ քանի մը անդամներէ բաղկացած ընկերութիւն մըն են, պահանջատէրերէն մեծամասնութիւնը վասն բարեկամութեան կրնան անոնցմէ մէկ-երկուքը և անոնց բաժին պատրաստ ապրանք միւս ընկերներուն բաժնէն դատելով՝ դուրս հանել, իսկ միւս անդամներու մասին (իւնիոն) միաբանութեան ընթացք բռնել, որով զատուող ընկերը այլեւս ամէն կերպ պատասխանատուութենէ զերծ կը մնայ :

Պահանջատէրեր տարին առ նուազն գէթ մէկ անգամ, հաւաքուելու և փոխանորդներէն հաշիւ պահանջելու և վիճակի մասին խորհրդակցելու և անանկին անմեղադիր (մասգոր) ըլլալուն և չըլլալուն որոշում տալու պարտաւոր են. փոխա-նորդները եթէ իրենց գծուած սահմանէն դուրս՝ շահը և մնասը պահանջատէրերուն կը պատկանի. իրենք իրենց վարձքը միայն պահանջելու իրաւունք ունին :

Այս փոխանորդները սինտիգութեան բովանդակ իրաւասութիւնը վայելելով, սնանկի ամբողջ գործերը կրնան վարել, կալուածը և ապրանքները ծախել և մէկ խօսքով ամբողջ տնօրէնութիւնները ընել :

Իւնիոն եղած գործը լինալուն պէս՝ փոխա-նորդներուն պաշտօնը կ'աւարտի, անոնք իրենց վերջնական հաշուեկշիռ ներկայացնելու և սնանկին անմեղադրութեան մասին իրենց դիտողութիւնը յայտնելու պարտաւոր են, այլ եւս գործը ըստ ինքեան կը ջնջուի :

Մնանկի մը անմեղադիր (մասգոր) ըլլալու վճռական որոշումը դատարանը կու տայ. այնպէս որ ժիւժ-գումիսէր իրաց վիճակ և պահանջատէրերուն կարծիքը պաշտօնապէս դատարանին կը հաղորդէ : Դատարանը անոր համաձայն իր որոշումը կու տայ :

Դատարանը՝ եթէ անմիջադրութեան (մասգորիկք) որոշում տայ, սնանկը այլ եւս ամէն կերպ պատժական պատասխանատուութենէ կ'ազատուի. անկէ յետոյ պահանջատէրեր միայն պարզապէս իրենց առնելիքը պահանջելու իրաւունք կունենան : Իսկ եթէ դատարանը մեղադրութեան (ասեմ մասգորիկք) որոշում տայ, սնանկը ինչպէս նիւթականին մէջ պատասխանատու է, անանկ ալ պատժական տեսակէտով մինչև վերջ պատասխանատու կը մնայ :

Սա գիտնալու է թէ, սնանկը անմեղադրութեան թէ՛ արժանանայ թէ՛ չարժանանայ, պահանջատէրեր մինչև վերջ, որ ատեն որ անոր կարողութիւնը գտնեն իրենց առնելիքը ամբողջապէս կրնան պահանջել :



Ժ Չ . Գ Լ Ո Ի Խ

ՍՆԱՆԿԻ ՄԸ ԵՐԱՇԽԱԻՈՐՆԵՐԸ
(ՄԻՒՖԼԻՍԻՆ ՔԷՖԻԼԼԵՐԻ)

Վաճառականի մը սնանկութեան առթիւ իր
երաշխաւորները և կամ փոխանցողները (ճըրանքա)
և ուրիշ առնչութիւն ունեցողներն ալ սնանկա-
ցած պարագային՝ պահանջատէրը իր առնելիքը
տողոսով միասին, ամբողջի մասային մէջ կ'ար-
ձանագրուի և համեմատական բաշխումի (դուրեմա)
մէջ, մէկ մասային ինչ որ իյնայ զայն առնելէն
վերջ՝ մնացացեալ մասը միւս մասային պահանջե-
լու իրաւունք ունի :

Իսկ եթէ երաշխաւորը չսնանկանանայ, պա-
հանջատէրը սնանկի մասային իրեն վիճակած բա-
ժինը առնելէ յետոյ, մնացեալը երաշխաւորէն պա-
ջելու իրաւունք ունի :

Սնանկի երաշխաւորները, երաշխաւորութեան
առթիւ իրարու պարտքը վճարած պարագային,
այլեւս վերջէն իրարմէ բան մը պահանջելու իրա-
ւունք չունին : (Երաշխաւորութեանը օրէնքներու
մէջ, թէպէտեւ, երաշխաւորը բուն պարտազանէն
կրնայ պահանջել, բայց այս պարագային երաշ-
խաւորը սնանկէն չի կրնար պահանջել :)

ՀԵՂԻՆԱԿԻՆ ՈՒՐԻՇ ԳՈՐԾԵՐՆ ՈՒ ԳԻՆԵՐԸ

	ԶԵՐ.
Վաճառականի մը ուղեցոյց Ա. մաս	10
»	»
»	Բ. մաս
Ընթացք վաճառականի	5



« Ազգային գրադարան



NL0218350

38.146

ՀԵՂԻՆԱԿԻՆ ՈՒՐԻՇ ԳՈՐԾԵՐԸ

Օրինաց Հաւաքածոյ Ա. Մաս	Գին 7 1/2
» » Բ. »	» 7 1/2

— Գին 1/5 Դահեկան —

Կը գտնուի ամէն գրավածառաց քով մեծաքան
առնողներու համար կարեւոր զեղչ կ'ըլլայ.

Դիմել Հեղինակին գրասենեակը Կ. Պոլիս, Սուլի
Համամ, Գաթըրճի Օղլու Փասաժ Թիւ 90-91 :

معارف عمومیہ نظارت جلیہ سنک ۲۸ کانون ثانی ۱۳۱۸ تاریخلی
و ۵ : نومرولی رخصتنامه سیله طبع اولمشدر